



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆԻՆ ՀՈՎԱՆԱԽՐՈՒԹԵԱՄԲ

**ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄՆ ՄԱՍԻՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ  
ԶԵՌՆԱՐԿ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ**

Հովանաւորութեամբ Արեւմտեան Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու կազմակերպութեամբ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգաբարձութեան, Չորեքշաբթի, 2 Մայիսի երեկոյեան ժամը 7ին, Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ դասախօսական իւրայատուկ հանդիսութիւն մը, որ նուիրուած է մեր ժողովուրդին նորագոյն պատմութեան ողբերգական օրերուն արձանագրուած ծառայական գործին:

Բանախօսելու հրաւիրուած է դաստիարակ եւ պատմաբան Փրոֆ. Վահրամ Շեմմասեան, որ մեր հասարակութեան ծանօթ է իր ուսումնասիրական բեղուն աշխատանքներով: Փրոֆ. Վ. Շեմմասեան, որ ներկայիս կը վարէ Նորթրիճի համալսարանի հայագիտական բաժանմունքը, իր ուսումնասիրական աշխատանքներուն ճամբով պատուիւի մը բացած է եւ լոյս սփռած՝ այն աշխատանքներուն ու ծառայութիւններուն վրայ, որոնք Բերիոյ Թեմի (Հալէպ) Ազգային Առաջնորդարանը կատարած ու մատուցած է Տեղասպանութեան օրերուն, Թուրքիոյ պետութեան կազմակերպած ու գործադրած ջարդերուն ու հալածանքներուն զոհ դարձած ու յաճախ մազապուրծ փրկուած հայ ընտանիքներուն, որոնք ապաստան գտած են արաբական այդ ասպնջական քաղաքին մէջ:

Բանախօսութեան նիւթը շահեկան է ու այժմեական՝ մէն մի հայու համար, որովհետեւ անկապ կ'ընդգրկէ այն տարիները, երբ մեր ժողովուրդը հարկադրաբար, իր կամքէն անկախ ստիպուեցաւ հեռանալ իր սեփական հայրենիքի օճախէն ու սկսաւ կազմաւորուիլ հայկական Սփիւռքը՝ իր այսօրուան հասկացութեամբ: Ահաւասիկ առիթ մը՝ ծանօթանալու այն ծառայութիւններուն, զորս մեր ժողովուրդին մատուցած է մեր Եկեղեցին, հակառակ անոր, որ ինք եւս իր հոգեւորականաց դասով ու Կիլիկեան Աթոռով դարձած էր հալածանքի ու բռնադատութիւններու թիրախ:

**UNDER THE AUSPICES OF THE PRELATE**

**LECTURE ON THE FIRST MONTHS OF THE GENOCIDE  
ORGANIZED BY ST. MARY'S CHURCH**

The St. Mary's Board of Trustees, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and by the initiative of the Western Prelacy Outreach Committee, has organized a lecture presentation on the topic "The Armenian Prelacy of Aleppo during the first months of the Genocide". The lecture will take place on Wednesday, May 2<sup>nd</sup>, 2007, at 7:00 p.m.

Professor Vahram Shemmassian, Chair of the Armenian Studies Department at Cal State Northridge, has been invited to lecture on the humanitarian mission of the Prelacy of Aleppo at the start of the Genocide, including but not limited to offering a safe haven for those who survived the massacres.

The topic is a new and interesting one that covers the first months when Armenians were forced out of their homeland into a foreign land, eventually resulting in the establishment of the Diaspora as we know it today. With this lecture, we are offered the chance to become familiarized with the self-less actions of those who served the Armenian people, such as clergy of the Holy See of Cilicia, despite being subject to persecution and constraints themselves.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org), Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.